



7

ՏԱՐԻ

թ. 188

Հ Ա Ն Դ Ի Ս

Շ Ն Ք Ե Ռ Ե Կ Ե Ն

12

ՓԵՏՐՈՒԱՐ

1863

Ինչ որ խնայողութեան և Տնօրէնութեան կը վերաբերի պէտք է ուղղել առ ՅՈՒՀԱՆՆԵՍ ՀՈՎԻՒԵՆՅԵՑ, Ղալաթիա, փողոց  
 Եօսիմանճուր, թիւ 55: — Այլ ծայր նամակ կամ ծայր կը մերժուի:  
 Օրոգիրը ամեն շաբթու երեքշաբթի օրերը կը հրատարակվի:  
 Վին ասորեկան (20 դրուսուշ արծաթ): — Վեցամսեայ 70: — Եռամսեայ 40: — մէկ թիւը 4 դրուսուշ: դուրս խրված  
 Օրագրոց ճամբու ծախքը ընդունողին վրայ է: — Ճանուցման տողը 1 դրուսուշ:

ԲԱՃԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԻ ԿԸՆԴՈՒՆՎԻՆ

Կ. ՊՕԼԵՍ Օրագրոյս գրասենեակը, Մեծ-Նոր-Սանի վերի դուռը թիւ 2:  
 ՋՄԻՌԻՆԵՍ Տեառն Աշտիքեան եղբայրց վաճառատուներ և ՏԵՂԻ Հանգէտին գրասենեակը: — ՏՐԱՊԵՉՈՆ՝ խաչատուր աղա  
 Կմնակնի գրասենեակը:

ԵՐԳԱՅԻՆ ԱՐԻՒ ՎԻՃԱԿԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ

Համառօտ յօդուածիս կէտքն հայրենեաց  
 ատելութիւնը չէ կամ անսիրելութիւն բնիկ  
 պարծանաց, մէջի դոյզն խորհրդածութիւնքն  
 ազգային կենաց սապօ հանգամանաց ուր  
 ուազի՞մ նկարագիրն ընկելով՝ իրախոյս մը սալ  
 է յաջորդ սերնդոց:

Հայ ազգն իր արդէ վիճակին մէջ ի նչպէս  
 արդէօք կը ներկայանայ յատեան պատմու  
 թեան: — Պատմութիւն ըսելով՝ հաս հասը  
 նալու չէ ս և իցէ դիպաց նկարագիրն. ապա  
 թէ ոչ՝ աշխարհիս ամեն մէկ օրը պատմու  
 թեան ամենամեծ մատեան մը կը դառնայ.  
 այլ այնպիսի ընկերութեան մը կենցաղոյն նը  
 կարագիր, որուն խելամուտութիւնն օգտաւէտ  
 ըլլայ ընդհանուր մարդկութեան:

Չեմք կարող ըսել թէ հայրենական բնիկ  
 կերպարանք՝ կամ լուազոյն ըսենք՝ ոգի մը  
 հիմկու հիմա սեփական ըլլայ հայ փողովըդ  
 եան. որովհետև անթիւ քաղթականութիւնք  
 ՚ի դարուց հետէ ասդիս անդին սիրուած՝  
 օտար և իրարմէ զանազան տարերք մտաց և  
 սրտի կրթութեան փոխ առեր են և անման  
 կենօք կը վարին. մէկ մաս մ'ալ իր ցածուն  
 և աղքատին յարկէն դուրս՝ շատ աշխարհ և  
 քաղաքականութիւն չգիտեր: Ստիպան ար  
 եան սիրովը խաբեալ համարինք թէ ազգին  
 կրթեալ մասին բարոյական, մտաւոր և քա  
 ղաքական սկզբունքը միանային. դեռ այն ա

տեն ալ հայ ոգի չէր բնակէր ՚ի մեղ: Հա  
 յաստանի օրհնեալ ծոցն է մեր խանձարուր  
 քը, նոյն բոլորիս ցանկալի հայրենիքը. Հա  
 յաստանի արեւը պէտք է վրանիս ցոլայ.  
 Հայաստանի բնութեան գեղեցկութիւնքը  
 խայտանցնեն զմեզ: Այո, այն կլիմային տակ,  
 այն լեռանց քաղցր հովանեաց և այն հովտաց  
 ու դաշտոց զովութիւններուն ապաւինելու  
 որ ըլլանք, երկրին կազմութեանն, աշխար  
 հին դրից, օդուն ներգործութեան, հարց  
 սրբազան սակերաց գերեզմանէն խօսած ձայ  
 նին, և քաղաքական յարաբերութեանց ազ  
 դեցութեանն համեմատ՝ կը ծնանի ազգային  
 ոգի մը, Հայաստանի ոգին: Այլ պատմու  
 թիւնն այն ատեն ոչ ցիր և ցաւ քաղաքակա  
 նութեան մը՝ այլ այն ազգային ուզոյն վրայ  
 նախախնամութեան ձեռքը կը դիտէ ուշի ու  
 շով. մարդկային կատարելականութեան բրու  
 նած ընթացքն ու կերպաւորութիւնը, և  
 զանազանելով զՀայն յամենայն ազգաց՝ անոր  
 մտաց նախատիպ յատկութեամբքը կը լուսա  
 ւորի:

Ազգին ամբողջութիւնն համասեռ տարերք  
 եութեան չունի, ըսինք. բացայայտազոյն  
 խօսելով՝ կատարեալ ընկերութիւն մը չի ձե  
 ւացներ. — բայց անձնասիրութիւննիս սնու  
 ցանելու նիւթ ունինք՝ շատ մը ուրիշ արե  
 ւելեան ազգաց վրայ մտածելով, որոց անց  
 եալը, ներկայն ու ապագայն մի է անշարժու  
 թեան կեդրոնը բեւեռած: — Ընկերութիւն  
 մը չկազմելուն պատճառը դիւրին է գուշա  
 կել. կրթութիւնն հաստորակնց չըլլալով՝ ըսյն

վնձ մը կը բաժնէ ժողովրդեան մեծ մասը միւսէն՝ նաեւ ըստ ընչից մասին . որով ընդհանուր ազգին մէջ ազնուական, քաղաքացի, կարուածատէր, արուեստաւոր և ւամիկ դասուց ճիշդ խորութիւնն հաստատուած չէ . — Պօրոյ հայ հասարակութիւնն, որ այս խըւրութիւնքը քիչ շատ բովանդակելով՝ աւելի օրինակ կուտայ զարգացման, բոլոր ազգը շրկացուցաներ : — Գասուց իւրաքանչիւրն իրենց առանձին գոյութիւնն ու կեանքն ունին, միանգամայն միջնորդութիւն ընելով ընդ վերնագոյն և ընդ ստորնագոյն դասանկղելի զօգիւ կը կապեն զազգն ողջոյն : Եւ անհամարն ու ընչեզուծեան տարբերութեամբն հանդերձ՝ մտաւորական հաւասարութիւն կը տիրէ այն ընկերութեան մէջ . — յայտնի է թէ ՚ի բոյց առնելու է աւմիկն, որ և ան ալ համեմատաբար կը թեալ ընկերութեան մը աւմիկն է . — անկէց կը ձեւանայ հասարակաց կարծիքն, որուն կշիռքով կը գաւին ազգին բոլոր գործերը, և բարոյական, քաղաքական ու ընտանեկան բարքը (Գաղղիացուց անուանածը Տօրս), որ անհրաժեշտ է ազգի մը բարգաւաճեալ գոյութեանը : Հասարակաց կարծիքն յետ կրօնից առաջին իշխանութիւնն է ընկերութեան մէջ . երանի երբ ըստաւորեալ է, և ցաւալն երբ կրկն ձեւը մտանուած . վասն զի մարդկանց պէտան ալ կը փոփոխի ժամանակաւ, (մերթ կը թօշնի կը ձերանայ, ապա կենդանութիւն կը դրձենու . մերթ աշխուժութեան փայլատա կունք կը ցաաքեցընէ, մերթ ալ խոհեմութեամբ կը սնանի . միով բանիւ՝ բիւրաւոր կերպարանք կարէ առնուլ, որչափ կ'առնու մարդկային միտքը՝ փայլակն աստուածային մտայ : Հասարակաց կարծիքը, ընկերութեանց ուղեցոյցն և առաջնորդը, և յիշեալ երրակի բարքը կը պահին ազգերնուս, պատմութիւնն ալ չկրնար իր գրչին տակ ներկայացնել զմեզ այն ազգաց, որոնք լն և առաւելեալ են անոնցմով :

Երբորդ՝ արժանաւոր նիւթ մ'ալ խորհրդաձուծեան կը պարուհակէ Հոյ հասարակութիւնը : Եւ մենայն ազնիք և ժողովուրդը Եւրոպայի թէ անկախ և թէ հպատակ ունին մասնաւոր սահմաններ կամ օրինադրութիւններ հասարակաց կացութեան : վարչութեան, ազգային գործոց մատակարարութեան, և այլն . և ամենայն տէրութիւնք յորս և Օսմանեան վեհափառ պետութիւնը, կը մեծարեն իւրաքանչիւր հպատակ ժողովրդոց այս առանձնաշնորհութիւնն, որով իւրա

քանչիւրին ազգութիւնն անեղծ կը պահուի : Ինտիկան սկզբան մը հետեւանք է ըսածնիս . ամեն անհատ իր կեանքն ունի, ընտանիք մը իրմով կը կառավարուի, այսպէս արամաբաւ նական օրինօք ազգ մ'ալ, որ մեծ ընտանիք է կը ցանկայ իր գոյութեան համարն ինքն առնուլ : Եւրոպային վարչութիւնը կամ սահմանադրութիւնն երբ իր իշխանութեանն հարդրկընէ զբազուս, ամեն : ատիճանի անձանց սերը կտանայ . ամենքը նախանձուոր կը յառնեն անոր կատարելագործութեանը, փայթեանդն՝ գործադրութեանն, և վրէժխորդի՝ պահպանութեանը : Իւրաքանչիւր մարդ իր գասուն պիտոյքը գիտնալով ու ազէկ զգալով, սահմանադրութեան այն մասին վերաբերեալ պարփակած թերութեանց վերցուելուն նպատամտաց կը լըսայ, և որչափ օր ըստ՝ օրէ իր իմացականութեան ջանքը ըստաւորի, նոյնչափ ալ կը բարձրանան ազգային օրէնք և վարչութիւն : Եւ ինչպէս որ երկրիս վրայ ամեն բան օգակի պէս շարկապեալ է ուրիշ բանի հետ, դաստիարակութիւնը և գրականութիւնն ալ կը ջանան անոնց բարձրութեանն հաւասարակշիւ ելլել : — Հոյ հասարակութիւնը՝ թերեւս ոչ այնչափ վերցիշեալ վարչութեան օգուաներն ըմբռնելէն՝ քան թէ ինքնաբեր հակամիտութենէ մը շարժեալ և ստիպեալ, թէ և այն ալ Եւրոպային վիճակին դէպ ՚ի յառաջագիմութիւն ընթանալուն մեծ նշանակ է, ի գլուխ աւրաւ յօրինեց՝ սահմանադրութիւն մը : Թէ պէտ գեռ չսկսաւ անոր գործադրութիւնը, սակայն կը կարգանք լրագրաց մէջ որ Եւրոպայութ (Պոստափառ Սուլթանը քիչ առտենէն պիտի բարեհաճի սահմանադրական վարչութիւնը շնորհել : Եւ թէ ազգն այն միջոցին երախտագիտութեամբ և եռանդեամբ զուգակցի Վեհապետին մեծանձնական և ազնուամիտ գիտաւորութեանը, դարուս և պատմութեան ուշը կը գրաւէ :

Հայրենեաց ներկայ վիճակն այս է . բայց երսուն տարի առաջ այս կեան հասնելու չէր յուսացուէր . բերկրալից յուսով ժամանակին ընթացիցն սպասեիք . արդէն հոյ հարիզակին վրայ փառաւոր ապագայ մը նկարուած կը նշմարեիք :

(Իւրաքանչիւր) 2. 7. 4. 8.

ԱՆՅԱԾ ՕՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿ

Հայոց արջիկ նաղերի,  
Դու իմ հրեշտակ հողածին,  
Ո՞ր այն օրեր ջանկարի,  
Որ սիրտքս իրեար սիրեցին :

Կարծեմ թրուան սրնթաց,  
Յեա դադու չ'են դէպ 'ի մեզ, —  
Եւ մէք սիրով միմեանց հեա, —  
Խօսեալու չ'ենք քաղցր ու հեզ :

Ընդ երանիք երանիք  
Սիրակցութեան քաղցր օրեր . . .  
Դուք շուտ անցաք գողունի, —  
Ինձ թողեցիք դառն վիշտեր . . . :

ՍԻՐԱԿԱՆԻ ՍԵՐ

Սիրականիս սուրբ սերը,  
Ինձ այրումէ անինսայ . . .  
Երբէք չ'եղաւ այն օրը,  
Որ այդ ցաւս նա զգայ :

Կորս սերը իմ համար,  
Այնչափ քաղցր է, անուշիկ,  
Մինչ ամեն օր անդադար,  
Վշտանումէ իմ սրբաիկ . . .  
Այն վիշտ է համարվում  
Եւ երբեմն այն սերը, —  
Պատճառ, եթէ չէ հասնում  
Իւր սիրածին, ի՞նչ է կեանքը . . . :

Յ. Բ.

Հեռուեալ նամակը կ'ընդունինք հրատարակելու խնդրանք :

Յարգի Խմբագիր Մեղ-Օրագրոյ .

Մասիւր իր վերջին 573<sup>2</sup>թուով Պաշտօնական Յայտարարութիւն մը հրատարակել է, որով Ազգային աւժամանակեաց Վարչութիւնը կը ծանուցանէ, որ մենք Ազգային Հիւանդանոցի մէջ վարած բժշկութեան

պաշտօննուս հրաժարած ըլլալով, Պ. Ս. Կայեղեան բժիշկը մեր տեղը Հիւանդանոցի բժիշկ է անուանած :

Կը փութամ ձեր օրագրին միջոցաւ հասարակութեան յայտնել, որ մենք մեզ պատճառաւ հրաժարանիս վէճ պահած, ո՛չ բանի- և ո՛չ ալ գրով. մինակ Տեղապահ Սրբազանին հարցուցած ենք, որ Օգնական Ինկերութիւնը իր պաշտօնէն դադարած ըլլալով, միթէ հարկ պիտի ըլլայ մեր ալ պաշտօնէ դադարելու թէ չէ : Թող հասարակութիւնը վճռէ թէ այս խօսքը հրաժարական տալ է, ի՞նչ է : Ազգային վարչութեան ըրածը ուրիշ բան չերեար մեզի՛ այլ միայն թշնամութիւն մը, որուն ծնունդը ուրիշ պարագայէ մը անալ եկած ըլլալը հասարակութիւնը քիչ ատենէն պիտի հասկնայ :

Ինքունեցեք, և այն :

Իերա 11/23 փետրվար 1863

ԱՅՅԵԱՆ

Կը լսենք, որ Խառաքելի Թաղական Խորհրդոյ հրաժարեալ անդամաց մէկ քանիներուն և իրենց համախոհներուն քանի մը անձանց համար առ Ազգային Վարչութիւնը մատուցած բողբոներնին մէկ քանի օր Պատրիարքարանի դիւանը մնալէ վերջը, դարձեալ տարագրողոց կողմանէ ետ է աւանուեր : Այսիկայ այն բողբոն մէջ գրուածներուն լոկ զըրպարտութիւններ ըլլալուն և Խառաքելի խըռութեանց բուն պատճառները այն ամբաստանեալ անձինք չըրպարեն բաւական ապացոյց ըլլալով, աւերրդ կը համարինք մեր բնութիւնը հրատարակել, զըր խոստացեր էինք Օրագրոյս 186 թուով :

Ըստ խնդրանոց Խառաքելի հասարակութեան, Ազգային Վարչութիւնն հաճեցաւ Խառաքելի քարոյիչ Երսէս Ապիսոբազոսի հրատան ընել որ ընդհանուր քուէարկութեամբ Խառաքելի նոր Թաղական Խորհուրդը կազմուի :

Արդէն 400 Թաղեցիք հասկցանք քուէ տալու . կը յուսանք որ քիչ օրէն քուէ համարն ալ կ'ըլլայ :

# Մ Ո Ւ Ր Ը Տ

Բ .

## Ք Օ Ռ Ս Ի Ք Ա Ն

(Տեւ. Թիւ. 187.)

— Տէր տրբայ, ըսաւ Տօնատիեօ, շտտ պատերազմներ տեսած էք դուք իրաւ, բայց դուցէ բնաւ տեսած ու հասկցած չէք թէ ի՞նչ է փոթորիկը. եթէ տեսներու հետարբերութիւնը ունիք՝ սա կայմին փաթթը ուեցէք ու նայեցէք, ահա հիմայ անոր աղէկը պիտի տեսնէք :

— Միթէ չէ՞մ կրնար ես ալ ձեզի օգնել, ըսաւ Սուրատ :

— Այ, հիմաիւ հիմայ հարկ չկայ Տէր, բայց վերջը ջրհանը ձեզի պիտի յանձնենք որ նաևուն մէջ լեցուելէք ջուրերը պարպէք . . . :

Այս խօսակցութեան ատեն մտնելը այն պէս սաստկացեր էր որ կարծես թէ արագըն թաց ձիու մը պէս քթին ծակերէն հով ու կրակ շնչելով, սրտու մը սրնջելով ու սուսը ներուն տակը կոհակաց փրփուրը թռցնելով ճանապարհորդաց վրայ կուգար : Տօնատիեօ ուժով մը դէկը մէկ կողմ տարաւ, նաւակը մէկէն ի մէկ իր ճամբան փոխելով խելը հովին դարձուց, կարծես թէ հասկցաւ որ շուտով հնազանդելու հարկաւորութիւն կայ : Այն ատեն հողմայոյզքը անցաւ ծովը դողդոջուն թողով իր ետին, ու սրահ մը փոթորիկը հանդարտեցաւ :

— Միթէ ո՞չ վտանգէ խալտեցանք, ասով ըսաւ Սուրատ :

— Այ վեհափառ Տէր, ըսաւ Տօնատիեօ, ասիկայ փոթորիկին յաւաճապահ գունդն էր որ անցաւ ու գնաց. հիմայ նոյն իսկ բանակը պիտի գայ :

— Հարկ է ուրեմն որ պետք եղած պատրաստութիւններն ընենք աղէկ ընդունելութիւն մը ընելու համար անոր, պատասխանեց արքան զուարթութեամբ :

— Ի՞նչ պատրաստութիւն պիտի ընենք, ըսաւ Տօնատիեօ, տաւազաստներն արդէն վարենք առած, կայմին վրայ քուրջի կտոր մ'ալ չկայ որ հովը անոր հետ կնայ. եթէ նաւակնիս ջուր չառնէ՝ սուսնի պէս ծովուն վրայ պիտի երերանք մնանք : Աղէկ բունեցէք ինքզինքնեդ Տէր . . . :

Այս միջոցիս երկրորդ հողմայոյզք մը կուգար առաջինէն աւելի արագութեամբ անձ

րեւով ու փայլակներով մէկտեղ : Տօնատիեօ ուղեց այս անգամ ալ նաւակին խելը հողմին դէմ տալ, բայց տակաւին դէկը չէր կրցեր դարձնել որ հողմը նաւակը ամփափեց. կայմը եղէգի պէս ծռեցաւ ու նաւակը կուհակ մը ներս առաւ :

— Չքհանք, պօռաց Տօնատիեօ : Տէր, ահա մեզ օգնելու ատենը . . . :

Պլանքառ, Աննկլատ և Սուրատ գլխորդներն առին ու անով սկսան նաւակին մէջ լեցուած ջուրերը պարպել որ հաղիւ երեք ժամու մէջ կրցան լննցնել : Առաւօտեան դէմ հողմը սկարացաւ, բայց ծովուն սաստկութիւնն ու ալեկոծութիւնը չի դադրեցաւ : Ղանապարհորդք անօթի ըլլալով ուղեցին քիչ մը բան ուտել, բայց բոլոր հետերնին առած պաշարներնին ծովուն ջուրը թրջեր էր. մի միայն գինին կրցեր էր կցորդութենէ զերծ մնալ : Արքան շիշ մը գինի առնելով բերնին դպուց ու ըմպեց, յետոյ իր ընկերաց տալով մնացեալն ալ անոնք խմեցին :

Քիչ ատենէն Տօնատիեօ նաւակին ծայրի պղտիկ առագաստը բանալ տուաւ, հողմը այնչափ փոփոխական էր որ մեծ առագաստը բանալ տալու չէր համարձակեր : Բոլոր օրը անցաւ ու նաւակը տակաւին տասը մղոնի չափ տեղ չէր կրցեր յաւաչանալ : Իրիկունք տախտակներուն մէջ տեղէն ճամբայ մը բացուելով նաւակը ջուր առնել սկսեր էր, ճամբորդները թաշկինակներովնին խնուցին զայն, ու գիշերը երկրորդ անգամ իր խաւարովը պատեց զերենք : Սուրատ խոնջութեամբ խորտակուած քնացաւ, Պլանքառ ու Աննկլատ՝ Տօնատիեօին քով գացին նստան և այս երեք անձինք որ կարծես թէ ոչ քուն և ոչ ալ խոնջութիւն կ'զգային, անոր քունին խախաղութեանը հսկեցին :

Վիշերը բաւական խաղաղ անցուցին, սակայն ատեն ատեն տկարածայն ճայթուժներ լուռեցներն պակաս չեղաւ. նաւորդները երբ այն ձայնը կ'առնէին, ահաբեկ իրարու երես կը նայէին ու յետոյ աչուրներնին արքային վրայ կը դարձնէին, որն որ նաևուն խորը ծովուն ջրովը թրջուած վերարկուն մէջ փաթթուած այնպէս խորունկ կը քնանար, ինչպէս որ քնացեր էր Աբօբէնի պատերազմաց ատեն Ագիպոսի աւազներուն և Ռուսիոյ ձիւներուն մէջ : Այն ատեն իրենց մէ մէկը սոքի կ'ելէր, նաւակին միւս ծայրը կ'երթար ալուաներուն մէջ նահանգական երգի մը եղանակը սուլելով . . . յետոյ երկինքը, ծովուն կոհակները ու նաւակը զննելէ վերջը

գարձեալ կուգար իր ընկերացը քով կը նստեր մեմուարով, — Մնարեղէն որ առանց հրաշքի հասնինք : —

Մաւուսեան գէմ նաւ մը տեսան . աօրեկայ վաճառահրանի նաւ մի էր որ Քօստիքայէն մեկներ թուլոն կ'երթար :

— Մաւ մը, պօռաց Տօնատիւտ : Արքայն ձայնէն արթնցաւ : Տօնատիւտ նաւակին գլուխը նաւուն շտիկեց, Պանքառ բոլոր առաքատները բացաւ ու Վանկլատ նաւակին գլուխը վազեց և արքային վերարկուն երեքարձէնի մը ծայրը դնելով վեր վերցուց : Մաւուն մէջի եղբայրները այս նշանը տեսան . նաւը իր ձամբէն խտարեցաւ ու սկսաւ դէպ ՚ի նաւակին վրայ գալ : Արքայ յիսուն մղնի հեռաւորութիւն մը մնաց մէջերին, արքան նաւապետին սրտալով իրեն մեծ վարձատրութիւն մը ընել խոտայաւ եթէ հաճի զինքը ընկերներովը մեկտեղ իր նաւն առնուլ ու Քօստիքա տանիլ : Մաւապետը այս առաջարկութիւնը մտիկ ըրաւ, ու յետոյ իսկոյն իր նաւատիներուն դառնարով ցած ձայնով հրաման մը տուաւ, որը թէպէտ Տօնատիւտ չի կրցաւ լսել, բայց կարելի է անոր շարժման քէն հասկցաւ որ իսկոյն քնքն ալ Վանկլատն ու Պանքառին անանկ հրաման մը տուաւ ու բուն նպատակը նաւէն հեռանալ էր : Վանկլատ ու Պանքառ շուտ մը հնարանդեցան, բայց արքան ստուընները զարնելով

— Ի՞նչ կ'ընես Տօնատիւտ, ի՞նչ կ'ընես, պօռաց, չէ՞ս տեսներ որ մեղի կուգայ կոր :

— Այո շատ աղէկ կը տեսնեմ կոր . . .

Հնարանդէ Վանկլատ, տէ նայիմ Պանքառ, ո՛հ, դուք շատ ուշ հասկցայ մեր վրան դառը : Այս ըսելով զէկին վրայ պատկեցաւ ու անանկ ուժով մը ու արագութեամբ մը գարցուց որ նաւակը իսկոյն իր ձամբէն փոխեց : Այս միջոցիս նաւը՝ նաւակին խելին խիստ մօտէն անցաւ :

— Մէն գաւոր, պօռաց արքան որ նաւապետին դիտաւորութիւնը նոր սկսեր էր հատկնալ, ու միանգամայն մէջքէն ատրձաւ նակ մը քաշեց պօռալով, « մօտ եկիւ, մօտ եկիւ », և նաւուն վրայ կրակ ընել ուղեց, բայց վաւօզը թրջած ըլլալով չի բռնկեցաւ : Սուրտաւ կրակ կարեցաւ ու չէր դադրեր մօտ եկիւ, մօտ եկիւ պօռալի :

— Թշուառականը, ըսաւ Տօնատիւտ, կարծեց որ ծովու աւազակներ ենք մենք ու մեզ ընկղմել ուղեց, յիմարը, իբր թէ մենք ընկղմելու վաանդէ գերծ մնացեր ու իրեն պէտք ունինք որ դայ մեզ ընկղմէ :

Այս յիշաւի նաւակը սկսեր էր նորէն ջուր առնել . Տօնատիւտին ազատեցաւ համար ըրած ձանքը նաւը սաստիկ ցնցեր էր ու ջուրը չորս կողմէն ներս կը լեցուէր . սկսան նորէն գլխարկներովին պարզել : Արգէն տասը ժամէ ՚ի վեր այս աշխատութեամբ զբաղեր էին որ յանկարծ Տօնատիւտ երկրորդ անգամ պօռաց : — Մաւ մը . . . :

Արքան ու ընկերները, իսկոյն աշխատելէ դադրեցան, նորէն առաքատները բացին ու նաւակը դէպ ՚ի նաւուն վրայ շտիկեցին : Մաւակին մէջի ջուրը պարպելու հոգ տանող չըլլալով, կամաց կամաց սկսաւ շատ նալ :

Մաւուն նաւապետը նաւակին մէջ եղողներուն ի՞նչ յուսահատ վիճակի մէջ ըլլալին հասկցաւ, ու ստի ինքն ալ բոլոր առաքատները պարզել տալով, արտօրնօք օգնութեան կուգար : Ամենէն առաջ Վանկլատ նաւը տեսածին պէս ձանցցաւ որ թուլոնի և Պասթիպի մէջ երթևեկող տերութեան թղթաբեր նաւն է, որուն նաւապետը իրեն բարեկամն ըլլալով բարձր ձայնով անոր անունը տուաւ ու օգնութեան կանչեց : Չուրը միշտ նաւակին մէջ կը լեցուէր, Սուրտաւ և իր ընկերները մինչև ծունկերին ծովուն մէջ էին, նաւակը խորացող հոգեարքի մը պէս կը հեծէր, սլէ՛էր կարող առաջ երթալու ու սկսեր էր իր վրան դառնալ : Այս միջոցիս նաւէն երկու երեք պարաններ նետեցին նաւակին մէջ . Սուրտաւ անոնց մէկը բռնեց, նաւակէն դուրս ցատկեց, չուանէ սանդուղը ձեռք ձգեց ու ազատեցաւ : Պանքառ և Վանկլատ ալ նոյն բանն ըրին ու խալտեցան, Տօնատիւտ միայն մնացեր էր նաւակին մէջ ու երբոր այս ալ մէկ ոտքը նաւուն սանդուղին վրայ դնելով միւս ոտքն ալ նաւակէն պիտի զատեր, նաւակը մէկէն ՚ի մէկ ընկղմեցաւ : Եթէ նաւը հինգ երկվայրկեան յետոյ մօտեցած ըլլար, չորսերնին ալ որ կրցան ազատիլ, ծովուն աակը պիտի կորսուէին . . . :

Ա. ՏԻՄԱ

Պիտի շարունակի : —

Մալորնթաց թընով հրատարակված յօդուածը Իւսկլատարի Եկնի-մահալէի թագաւ կան խորհուրդին վրայ անոր դէմ մէկ ուրիշ յօդուած մը բերաւ մեղի, որը այս անգամ տեղ չ'ունենարով, առաջիկայ թուով պիտի հրատարակենք :

Ամեն լուսաւորեալ երկրի մէջ՝ օրագիրներուն գլխաւոր պաշտօնն ու պարտաւորութիւն ճանչցուած է՝ հասարակաց կրօնաւէրն ու շահը պաշտպանել, բռնութիւններն ու անիրաւութիւնները երեւան հանել, անզաւան իշխանութեան օրէնքները յարգել տալ, չթողաւ վերջապէս որ անհնար մը իր կաւանայր ու խելքին համեմատ վարուի, պուայ, կանչէ, զարնէ, հայհոյէ, կողոպտէ ու մէկի ի ելէ : Արբար օրագիր մը ասանք ասանց կրից, ասանց կուտակցակիսն հակառակաօրութեան անաչառապէս ու անշահասիրութեամբ կը նէ, իր պաշտօնն ու պարտաւորութիւնները լաւ կը կատարէ և երկրին կամ ազգին մեծ ծառայութիւն մատուցած կ'ըլլայ . իսկ երբոր օրագիր մը մի միայն իր մասնաւոր շահուն ետեւ կ'ըլլայ, մի միայն մասնաւորի մը կամ խումբ մը մարդոց կողմ կը բռնէ, զանոնք կը շողջորթէ ու անոնց բռնութիւնները, անիրաւութիւնները, գողութիւնները և այլն միշտ գողելու կը նայի, այն օրագիրը օրագիր չէ, այլ այնպիսի վայրենի գաղան մը, որ այն գեշութեանց հեղինակներէն աւելի կը գիշատէ ու կը մնասէ :

Անր Վրբէն մէջ խել մը մարդիկ կան, աւանք չգիտեմ որո՞ւ կամօք և որ իրաւամբ առանձնաշնորհութիւն ունեցող արարածներէն, որոնք կ'ուզեն ազգին ամեն գործերուն խառնուիլ, բնաւ գործ մը առանց իրենց հաւանութիւնն առնելու չեն ուզեր որ կատարուի, միշտ ազգային օրինաց և Տէրութեան կամայր հակառակ վարուելէ չեն դադարիր . ժողովուրդը կը կեղեքեն, ստնահար կ'ընեն անոր սրբազան իրաւունքները : Հասարակաց շահուն կը մնասեն, ազգային հաստատութիւնները շարնալ կը մատակարարեն, մեծ եկամուտ կը հաւոքեն անոնցմէ, քիչ ծախք կ'ընեն, ու աւելցած դուրսը փոխանակ Սոյր-Հաշուց Երեսն րէնի երեսն շահ-կողմն անցունելու իրենց գրպանը կ'անցնի, և որ աւելի է՝ շատ անգամ ալ այն երեսը անգիր չի ձգելու համար, զենի կողմը մեծկակ գուրմար մը իրեն պարտք կ'անցուի, անզին ժողովուրդը այն պարտուց ուսկից առաջ գարը կ'ուզէ իմանալ, բայց իրեն կը պատասխանուի . « ունիս իրաւունք վճարելու, բայց ոչ հաշիւ պահանջելու » : Այս բաներուն ամենն ալ կ'ընեն կ'ըրան, ու երբոր ազգային օրագիր մը իր պարտքը լաւ ճանչնալով իրենց մնասակար գործքերը երեւան կը հանէ, իսկոյն խափանել կը խորհին, ոչ թէ գործքերնին վասն զի ամեն մարդ լը-

սած է ու չեն կրնար . այլ օրագրին հրատարակութիւնը . . . . .

Շատ անգամ տեսնուած ու լուծած է, որ վերայիշեալ յանցանքներով կամ անոնցմէ մէկով օրագրի մը մէջ ամբաստանեալ անձը, իր համոտահաններէն, բարեկամներէն կամ եթէ ժողովական մ'է իր անգամակիցներէն մէկ քանիներուն գրեթէ սապէս խօսելու կ'ելլէ . — Այս ինչ օրագիրը իմ անցած օրուան ըրածս պատմեր է, պատուոյս է դպեր պէտք է որ այն օրագիրը խափանել տալու մէկ հնարքը մտածենք :

— Ինչպէս կ'ընեն իր բարեկամները խափանել տալ, բայց ինչ կերպով ու ինչ լուծելով, անիկոյ նախ՝ քու պատուոյդ չէ դպեր, այլ ըրածդ անաչառութեամբ հրատարակեր է, պատուոյդ անգամ դպած ըլլայ, մենք չենք կրնար բան մը ընել, պէտք է կառավարութեան բողոքես :

— Իայց չէք մտածեր որ այսօր իմ գաղաւնիքներս երեւան հանողը, վաղն ալ ձերինները պիտի հանէ : Եթէ իրօք պատուոյս չէ դըրած, մենք ամենա մեկանց կ'ընենք որ դպեր է, մինակ լուծմ'նէ՝ գուցէ պղտիկ խնամ . ամենա մեկանց ուղածնուս պէս ճաղախ մը կը շինենք, օրագրապետին մտքէն անգամ չ'անցածները մէջը կը շարենք, ազգին մէջ խռովութիւն յարուցանող է լուծելով կ'ստորագրենք ու Բարձրագոյն Գրան կուտանք անոր հրատարակութեան խափանու մը խնդրելով :

Արբէն այն մարդոց մէջ անանկ անձ մ'ալ կը գտնուի, որ օրագրին հարուածը ուրիշ ատեն ու ուրիշ պարագայի մը մէջ կերած կ'ըլլայ, ասիկայ աւելի խոյտառակելէ վախնալով ժամանակին ձայն չէ հանած, բայց յարմար առթի սպասած է, մեկէն իր բախտակցին վերջի խօսքերը զինքը կ'արթնցնեն :

— Մէջն ալ գրենք որ Տէրութեան ալ անհնազանդութիւն է ըրած, կը պուայ :

— Այո, այո, կ'ընեն մեկայնոնք ալ անոր հաճոյանալու մտք և խիսն ճաղախ մը կը շինեն, իրենց մտածած կերպով ու Բարձրագոյն Գրան կուտան առանց խորհելու որ եթէ բարեխնամ Առաւելարութիւնը քննութիւն մը ընելու ելլէ, օրագիրը անպարտ և ամբաստանողք յանցաւոր կրնան ելնել :

Արբէնք որ ասոր նման գործ մը պատահած է այս օրերս ալ : Ասոր փախձանին սպասելով՝ մեր պարտաւորութիւնը լուծել է հիմակու հիմայ :

Կառավարութիւնն է որ կը դատաւարուէ  
և մենք գիտենք ու վստահ ենք որ կառավար  
ութիւնը չի դատաւարուէր գործ մը առանց  
գատելու և առանց լսելու թէ ամբաստա  
նողք և թէ ամբաստանեալք :

Շարեւալ Սորջ ըսած Բոյը .

Մէծմուտը—Հաւատիս պատուական լը  
րագրայն ընթերցողները անշուշտ կը յիշեն  
վերջին օրերս իր և Պրուսայու Պ. Օհրայպ  
Մագդալայն մէջ տեղի ունեցած վիճաբա  
նութիւնը Սորջ ըսուած բոյսին վրայով :

Գաղղիական օրագրի մը մէջ երկար յօդ  
ուած մը կը կարգանք այս բոյսին վրայ , ո  
րուն հեղինակը հռչակուոր բուսաբան Պ.  
Լ. Իզայօ՝ Մէծմուտի մեծարդոյ խմբագրին  
պէս Սորջի մշակութեանն մեծ արդիւնք չի  
յուսար , ինչպէս որ պիտի տեսնուի մեր  
նոյն յօդուածէն ըսած սա հեռուեալ քաղ  
ուածքնուս մէջ :

« . . . Սորջն հին ասեանները Եւրոպայի մէջ ծանօթ և  
գած բոյս մի էր . Լինէ անոր նկարագրութիւնը ըսած ասեան  
holmus saccharatus կանուանէր զայն , և քիւնդ andropogon  
saccharatus : Բնիկ շատ մը Բաւալիոս անուամբ մէկը՝ Փր  
ս ասեան շրջակայները անցեալ գարու վերջեր մշակել առաւ ,  
բայց յաջորդութեան չը գտնելով չը շարունակեց , որովհետեւ  
չէր կրցեր անիկ իր յուսացածին շար շարքը առնուել : Եւոր  
վրայ հէջ մեկը այն բոյսը մշակելու ետէ չի գաւ , որով ան  
ասեանն ի վեր անուան անգամ Եւրոպայի մէջ մոռցուեցաւ :

1851 ին Չինաստանի Չանխի քաղաքը նստող Գաղղոյ  
հիւ գաստար Պ. ալ Մոնթիլի , այս սորջի հաւանքն Փա  
րիզու աշխարհագրական (նկերա թեան խրկելով՝ նորէն սկը  
սան տեղ տեղ անոր մշակութեան փորձերը ընէ . . . Գաղ  
ղոյ մէջ մինչև հիմայ եղած մեծամեծ փորձերն բնաւ չս  
հաւեա արդիւնքը շտեմուեցաւ տակաւին : Արդէն շատերը  
հասկցած են , որ թէ իր տուած շարքայն նուազութեամբ և  
թէ գտնի հանելու դժուարութեան պատճառաւ , սորջն չի  
պիտի կրնայ մրցիլ ոչ ճշմարիտ շարքի եղեցին և ոչ ճակըն  
դիղն հեա . . . Սորջն եղած շարքին տեսանն ու քանա  
կութիւնը մինչև հիմայ գահացուցիչ չըլլալով , ըստ մեզ ան  
կորեկ կ'ըրեալ ընկել տեղացի շարքի բերոյ կարգը գաւ  
ուիլը :

« . . . Բանի մը ասրի շարունակ որթեր ան հիւանդու  
թեանը պատճառաւ ց բնութան գիները տեղացած ըլլալով , ո  
նանք որ սորջն մեծ արդիւնք ձեռք ձգելու համար յոյսեր  
նին չ'են կորած , ուղիքն անիկ ց բի հանել , Հանած ց բի  
նուն հանը այնչափ գէշ էր , որ վաճառատոյներու մէջ ծախու  
աւնող մը չի կրնայ գտնել , թէ պէտ և ց բի սղութիւնս կոր :  
Կարծեմ որ որչափ ասան ու ընտիր համով ալ հանելու մէկ  
հնարը գտնուի . գարծեալ սորջի ց բին չի պիտի կրնայ մրցիլ  
Արժեք բի հեա :

« Իսկ սորջն շարք հանելու մասին կը պատուիրենք  
երկրագործոյ որ մեծ խահմութեամբ վարուին . . . »

Գաղղիական Բալի լրագիրը վերաբար  
7 Թուով հեռուեալ լուրը կուտայ :

« Երեկ սուտու Մոնսիներ Վիլքսանդ  
րեան՝ Արուստղէ մի արքեպիսկոպոսը (Մագդալէնի  
(Մագդալէնայի) և կեղեցւոյն մէջ Հայերէն  
հանդիսաւոր Ս. պատարագ մատոյց ըստ ծի  
սի Հայաստանեայց եկեղեցւոյ : Օգետանե  
րուն շքեղութիւնն ու մեղի անձանօթ ձեւը ,  
հայկական ծիսին ծանրութիւնը , որ իր պարզ  
և յստակ ձևերովն իր ծայրագոյն հնութիւնը  
կը հասկընէ և ահամայ ու շաղբութիւն ու  
պատահումը կ'ազգէ . այս ամեն պարագա  
ները խորին տարաւորութիւն մը ըրին ներկայ  
գանուողներուն վրայ , որոյ մէջ այլ և այլ  
ծեսէ և ամեն ազգէ արևել բարբ կային :

Մոնսիներ Վիլքսանդրեան , պատարագ  
մատուցած ասեան երեք գոյր ունէր քովը  
հայկական կերպարանքով , և Փարիզի կղերէն  
ալ երկու նորասի քահանայք սպասաւորու  
թիւն կրնէին : Այս բարձրաստիճան Հայ ե  
կեղեցականը՝ որ քանի մը շարքով ի վեր  
մեղի հիւր է , յիսուն տարեկանի չափ կ'ե  
րևի . դէմքը քաղցր , հաճախեղ և լուրջ է .  
երկայն մօրուք մը ունի որ նահապետական  
երկայն մը կուտայ իրեն :

ՄԱՍՍ

ՍԵՐՊՈՅ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵԼԵՒՄՏԻՑ

ՀԱՆՈՒՆՑՈՒՑԱԿ

ԵԿԱՄԱՏՔ

	Քրոնք • հարդ
Ռեզուսի հասցիք , նամակատոյց և հեռա	
գրասանոց արդիւնք և այլն . . . . .	576-000 —
Հարկք . . . . .	4-865-955 20
Մարք . . . . .	960-000 —
Չանապան տարբեր . . . . .	512-000 —
Արտաքոյ կարգի հասցիք . . . . .	840-000 —
Արտաքոյ կարգի հարկ , Չանխի հարցմ մարդ	
դրսի . . . . .	4-580-000 —
	<b>11-951-955 20</b>

ԾԱԽՐ

Պահանջարկան ծախքեր , իշխանին սահ	
մով ասած ասրի կան սոճիք , և այլն . . . . .	1-2 8-08 40
Տեղա թեանոց ծախքեր . . . . .	870-984 20
Պաշտօնարանոց , ակադեմիա ծախքեր . . . . .	9-611-940 60
Արտաքոյ՝ որ պահեստի սնուս կին տահմուտ և	240-000 —
	<b>11-951-955 20</b>

Միլանի օրագիրներէն մեկը, Եւրոպայի առաջին կարգի թատերական երգեցողաց առած ամսականները կը նշանակէ այսպէս: — Թամպէռ-իւր Ս. Իէթրօսուրկի մէջ ամիսը 18000 ֆրանք կը շահի: — Մառիօ, Բարիլի մէջ 15000 ֆրանք: Բառքէն, Ս. Իէթրօսուրկի մէջ 18000: Սօնճիի, Լիլլօնայի մէջ 12000: Տիկին Լօթթի, նոյն քաղաքին մէջ 15000: Տիկին Իէնքօ, Բարիլի մէջ 12000: Տիկին Պօսկի Մամօ, Միլանի մէջ 10000: Նեկուինի, Միլանի մէջ 8000: Տիկին Թեատուքօ Բարիլի մէջ 10000: Պէթթիի, Մառիօսի մէջ 12000: Տիկին ար Լակուանթ, նոյն քաղաքին մէջ 1200: Բառուիօն, Պաուսթօնի մէջ 9000: —

**ՀԵՏԱՔՈՒՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ**

Օստրալանի լէյնայ. — Ընդ մէջ 143 լեզու խօսող զանազան ազգեր կը բնակին, Եւրոպայի մէջ 53, Ափրիկէի մէջ 115, Ուկրաինայի և Ամերիկայի մէջ 422:

Բաղամասո-աճո-ի-ն. — Հնդկաց դիւցաւ բանու թիւնը 360.000000 աստուածու թիւն կը շահնէ:

Մարդոս վրայ. — Միջին հաշուով երկի մարդոց ուղեղը 3 1/3 լիւրա կը կըսէ. իսկ կանանցը 2 2/3 լիւրա:

Մանուկ թեան ատեն՝ երակը 180 անգամ կը զարնէ ամեն մէկ վայրկեանի մէջ. պատանեկու թեան ատեն՝ 80. հասուն հասակի վերջը՝ 60:

Մարդոս արեանը միջին տաքութիւնը 92 աստիճան է. սխարինը՝ 102. բաղինը՝ 107:

42 մարդոց արեանը՝ 24 լիւրանոց արօրի մը խոփը շինելու չափ բաւական երկաթ կը մատակարարէ:

Հանաճո-ի. — Ընդդիպէն տարին 31,500.000 տակաւաչափ հանքածուխ կ'երէ, Պէճիգայէն 4,960.000. Գաղղիայէն 5,000.000. Միւս յետ Լահանգներէն 4,800.000. Բրուսիայէն 3,500.000. Աստրիայէն 800.000 միայն:

Կենդանեաց վրայ. — Փիղին կենաց տեւողութիւնը 200, 300 և երբեմն մինչև 400 տարի է:

Կը հաշուեն որ վայրենի բազը մէկ ժամու մէջ 30 մղոն տեղ կրնայ երթալ: Օրիճա-

նին թռչիլը աւելի արագ է, և ամենէն աւելի՝ ճանձը մէկ ժամու մէջ 60 մղոն տեղ կը թռչի:

Միջապետոն և յո-կերոն Բաղամասո-ի-նը. — Մեղուաց թագուհին շարունակ երկու ամիս օրը 200 հաւկիթ կ'ածէ: Տուներնուս մէջ թռչող ճանձերուն միմիայն մէկ հասար, մէկ եղանակի մէջ 20 միլիօն հաւկիթ կ'ածէ:

Պիծակաց մէկ բոյնը սպիրաբար 15 էն մինչև 16,000 խորշ կը պարունակէ:

Մէկ լիւրա կարմիր օրդանը՝ 70.000 խորշած միջատ կը պարունակէ, և տարին 6-700 հազար լիւրա կարմիր օրդան կը մոյցնեն Եւրոպայի մէջ:

Սաղան ու խանիչը բոլորած ձուկերը 50 էն մինչև 200.000 հատ հաւկիթ կ'ածեն. լիկան 20-30.000. Թիւնիկը (ուսկուսիւրու) 4-500.000. ձողածուկը (պաքբալա) 2-3 միլիօն. սալմօն բոլորած ձուկը մէկ տարուան մէջ 8-10 միլիօն հատ կ'ածէ:

**ԴԱՇԱՆՑ ԹՂԹՈՅ**

ԲՆՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԵՐՔՈՒՄԸ

ԱՐԱՐ

**ԿԵՐԱՊԵՏ Վ. ՇԱՀՆԱՕԱՐԵԱՆՑ**

Միաբան Արքայ Լճիաճնի և անդամ Խորհրդարանի Կայսերական Ղեմարանին Տեաղ Լազարեանց, որ 'ի Մոսկոյ:

Կը ծախուի, Մեծ նոր խանի վեր Դ. Գ. Պարտիզպանեանի սենեակը, և Մերձանը՝ Պաղտասար և Յ. Մարգարեան գըրալաճառաց խանութները:

**Գին 3 Ֆրանք.**

ՏՊԱԳՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԻՆՏԻՍԵԱՆ